

14 դեկտեմբերի 2010

### **ՄԵՖ Ինտերնեյշնլը բացել է նոր մասնաճյուղ**

«ՄԵՖ Ինտերնեյշնլ Ունիվերսալ վարկային կազմակերպություն»-ը Գյումրի քաղաքում բացել է նոր «Գյումրի» մասնաճյուղը Տիգրան Մեծի 1/3 հասցեով:

«Գյումրի» մասնաճյուղը կտրամադրի ձեռնարկատիրական, գյուղատնտեսական, սպառողական և վերանորոգման վարկեր Շիրակի մարզի համայնքներում:

ՄԵՖ Ինտերնեյշնլը շարունակում է կատարել իր հիմնական առաքելությունը, այն է. գործարար զարգացման և ֆինանսական ծառայությունների տրամադրում ձեռներեցներին՝ իրականացնելու արդյունավետ նախաձեռնություններ ի աջակցություն Հայաստանում երեխաների բարեկեցիկ կյանք հետապնդող ընտանիքներին և համայնքներին:

Հարցումների համար դիմել Ռուզան Չեչենյանին  
+37410 577771 հեռախոսահամարով, կամ [rouzan\\_t@sef.am](mailto:rouzan_t@sef.am)

#### **Լրացուցիչ տեղեկություններ.**

ՄԵՖ Ինտերնեյշնլ Ունիվերսալ Վարկային Կազմակերպությունը հիմնադրվել է 1997 թ-ին Վորլդ Վիժն միջազգային քրիստոնեական բարեգործական կազմակերպության կողմից: 2003 թ-ին ՄԵՖ Ինտերնեյշնլը ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հավատարմագրվեց որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն: ՄԵՖ-ի միակ սեփականատերը ՎիժնՖանդ Ինտերնեյշնլ է՝ Վորլդ Վիժն Միջազգային Բարեգործական Ընկերության միկրոֆինանսական մասնագիտացված կառույցը:

ՄԵՖ Ինտերնեյշնլը ներկայումս ունի երկու մասնաճյուղ Երևանում, մեկական Գյումրիում, Սիսիանում, Կապանում, և չորս ներկայացուցչություն՝ Թալինում, Ստեփանավանում, Գորիսում և Մեղրիում:

Կազմակերպությունը տրամադրում է բիզնեսի և գյուղատնտեսության զարգացման վարկեր, սպառողական վարկեր, ինչպես նաև ֆինանսական խորհրդատվություն: